

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ
2019Թ. 2--ՐԴ ԿԻՍԱՍՅԱԿ****ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը ապահովեց հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը՝ շարունակելով կատարելագործել ծառայությունների մատուցումը՝ հիմնական շեշտը դնելով թվային բանկային ծառայությունների ընդլայնմանն ու զարգացմանը, ծառայությունների մատուցման բոլոր ուղիների և հնարավորությունների զարգացմանը, բանկային պրոդուկտների և ծառայությունների պարզեցմանը, սպասարկման մշակույթի և ուղիների կատարելագործմանը, ինչն ուղղակիորեն իրենց դրական ազդեցությունն ունեցավ Բանկի ոչ միայն ֆինանսական գործունեությունն արտացոլող ցուցանիշներում, այլ նաև ՀՀ բնակչության շրջանում զգալիորեն ապահովեցին Բանկի դրական հեղինակությունը և, ելնելով Բանկի գործունեության ուրույն սկզբունքներից՝ ամրապնդեցին Բանկի՝ որպես առաջատարի ընկալումը ՀՀ բանկային համակարգում:

Անդրադառնալով հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ պետք է նշենք, որ Բանկը 2019 թվականի 2-րդ կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապահովել է ակտիվների ավելի քան 16% աճ: **Ակտիվները** 31.12.19թ.-ի դրությամբ կազմել են 327 մլրդ դրամ, ընդ որում հաճախորդներին տրված վարկերը (համախառն վարկային պորտֆելը) կազմել է 230 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 30 մլրդ դրամով (15%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 69%-ը, որից,

- Անհատական վարկային պորտֆելը աճել է մոտ 22 մլրդ դրամով (24.1 %-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը աճել է մոտ 9 մլրդ դրամով (8%-ով):

Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են մոտ 40 մլրդ դրամով կամ 16.3%-ով և կազմել 282 մլրդ դրամ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի **սեփական կապիտալը** կազմել է 45 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 5.9 մլրդ դրամով կամ 15.2%-ով:

2019թվականի Բանկի **զուտ շահույթը** կազմել է 5.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 11%-ով:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները հետևյալն են՝ Կապիտալի շահութաբերություն՝ 12.91%, Ակտիվների շահութաբերություն՝ 1.79%:

Ծախս / Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 54.4%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 55.7% ցուցանիշի դիմաց:

2019թ.-ի երկրորդ կիսամյակում Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում:

Բանկի ֆինանսավորման աղբյուրները

2019թ. երկրորդ կիսամյակի վերջի դրությամբ բանկի կողմից ներգրավված փոխառու միջոցների կազմում ամենամեծ տեսակարար կշիռը՝ 78.9%, կազմել են հաճախորդներից ներգրավված միջոցները: Սույն ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 35 մլրդ դրամով (18.7%-ով), ինչը վկայում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ձկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին: Բանկերից ներգրավված միջոցները կազմում են փոխառու միջոցների 2.4%-ը, այլ փոխառու միջոցները՝ 7.5%:

31.12.2019թ.-ի դրությամբ Բանկը տեղաբաշխել է 19.9 մլրդ ՀՀ դրամի դրամային, դոլարային և եվրոյով պարտատոմսեր, որոնք կազմում են փոխառու միջոցների 7.1%-ը:

Այսպիսով, 2019թ.-ի երկրորդ կիսամյակի վերջի դրությամբ Բանկը գրանցել է սեփական և փոխառու միջոցների 16.0% հարաբերակցություն՝ 281.6 մլրդ ՀՀ դրամ փոխառու միջոցների և 45 մլրդ ՀՀ դրամ սեփական կապիտալի մեծությամբ:

2019թ. վերջի դրությամբ ՀՀ բանկային համակարգը բոլոր էական ցուցանիշների գծով արձանագրել է աճ նախորդ տարվա համեմատ: Բանկային համակարգի ակտիվները աճել են 18.25%-ով՝ կազմելով 5,805.33 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները հաճախորդների նկատմամբ^{1*} 21.21%-ով՝ կազմելով 3,539.93 մլրդ ՀՀ դրամ, ընդհանուր կապիտալի գծով արձանագրվել է 13.38% աճ և կազմել 844.84 մլրդ ՀՀ դրամ: 31.12.2019թ.-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 78.02 մլրդ ՀՀ դրամ, որը 44.87%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Բանկը 31.12.2019թ. դրությամբ բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա հաշվարկված ֆինանսական ցուցանիշներով ՀՀ բանկային համակարգում զբաղեցնում է՝

- ակտիվներ՝ 6-րդ տեղ (326.6մլրդ դրամ կամ համակարգի 5.6%),
- պարտավորություններ հաճախորդների նկատմամբ^{1*} 6-րդ տեղ (228 մլրդ դրամ կամ համակարգի 6.4%),
- վարկային ներդրումների ծավալով՝ 6-րդ տեղ (226.7 մլրդ դրամ կամ համակարգի 6.3%),
- ընդհանուր կապիտալ՝ 8-րդ տեղ (45 մլրդ դրամ կամ համակարգի 5.3%):
- զուտ շահույթ՝ 7-րդ տեղ (5.4 մլրդ դրամ կամ համակարգի 7%),

ՈՍԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2019թ. երկրորդ կիսամյակը բավական հաջող ընթացք ունեցավ Բանկի համար: Բանկն ամրապնդեց իր դիրքը հայաստանյան առաջատար բանկերի շարքում՝ որպես կայուն, իրացվելի, մրցունակ բանկ՝ ապահովելով ծառայությունների և պրոդուկտների մեծածավալ ցանկ:

Բանկի տեսլականն է դառնալ առաջին նախընտրության բանկ Հայաստանում:

Բանկի առաքելությունն է բավարարել մեր հաճախորդների ֆինանսական պահանջները և աջակցել նրանց՝ հասնել ֆինանսական հաջողության՝ ապահովելով սպասարկման բարձր որակ և բանկային ծառայությունների հասանելիություն թե Բանկի սպասարկման ցանցում և թե հեռահար բանկային ծառայությունների հնարավոր բոլոր եղանակներով:

^{1*} Ներառյալ հաճախորդներից ներգրավված ստորադաս փոխառությունները

Բանկը հաճախորդներին ծառայություններ մատուցելիս որդեգրել է հետևյալ արժեքները.

- Հասանելիություն
- Մատչելիություն
- Նորարարություն
- Տեղեկացվածություն
- Աջակցություն
- Սրտացավություն

Բանկը կիրառում է հետևյալ կորպորատիվ արժեքները.

- Թիմային աշխատանք
- Պատասխանատվություն
- Որոշումների կայացման իրավասությունների պատվիրակում
- Ազնվություն
- Ուսուցում զարգացում
- Ոգևորություն:

2019 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքներ, ակցիաներ, ներդրված ծառայություններ և նորամուծություններ.

1. Ներդրվել են ՓՄՁ ֆինանսավորման «Բիզնես հիփոթեք», «Պրոգրես», «Պրոգրես լիզինգ», «Converse4Business», «ConverseBlitz» նոր վարկատեսակները և «Պրոգրես» ֆակտորինգի/դեբիտորական պարտքի ֆինանսավորման գործիքը:

2. Ներդրվել է «Converse4Women» պրոդուկտի և բանկային ծառայությունների փաթեթը:

3. Իրականացվել են հիփոթեքային, անշարժ գույքի և ոսկու գրավով ֆինանսավորումների տրամադրման/տեղափոխման ակցիաներ:

4. Սահմանվել են «Ա.Վ.Ա.Ս» և «ԱՆՏԱՌԱՅԻՆ ՇԻՆ» ՍՊԸ-ների կողմից կառուցվող շենքերի անշարժ գույքերի գնորդներին հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանները:

5. Սահմանվել են «ՄՈՒԼՏԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ ԵՎ «ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ հետ համագործակցության շրջանակներում ավտոմեքենայի ձեռքբերման վարկի տրամադրման ակցիայի պայմանները:

6. Իրականացվել է նախապես սահմանված պայմաններին բավարարող հաճախորդների տարբեր սեգմենտներին հատուկ պայմաններով վարկավորման «Հատուկ Ձեզ համար» ակցիան:

7. Ներդրվել է վճարային տերմինալների միջոցով ԱՊՊԱ պայմանագրի՝ հաշված բույներին ընթացքում կնքման հնարավորությունը:

8. «Հայփոստ» ՓԲԸ հետ համատեղ նոր նախագծի շրջանակներում «Հայփոստ» ՓԲԸ բաժանմունքներում բանկային ծառայությունների մատուցման արտոնյալ պայմաններ են սահմանվել:

9. «Գյումրի», «Նոր Նորք», «Երիտասարդական», «Կիլիկիա», «Կենտրոնական», «Արշակունյաց» մասնաճյուղերի կողմից պահատուփերի վաճառքը խթանելու նպատակով ֆիզիկական անձ հաճախորդների համար սահմանվել են անհատական պահատուփում պահատվությունից օգտվելու արտոնյալ պայմաններ:

10. Որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատու ընկերություն՝ Բանկն այս տարի ևս աշխատակիցների և հաճախորդների աջակցությամբ իրականացրեց Դարձիր Ձմեռ պապ բարեգործական միջոցառումն այս անգամ Քաշաթաղի /Լաչին/ Արծվաշեն գյուղի 47 երեխաների համար, ինչպես նաև ֆինանսավորել է մանկական խաղահրապարակի շինարարությունը:

11. Քարտային ոլորտում ևս Բանկը 2-րդ կիսամյակի ընթացքում հանդես եկավ բազմաթիվ լոյալության ծրագրերով, իրականացված միջոցառումներից կարելի է առանձնացնել.

11.1. Բանկի Մաստերքարտ քարտապանների համար գործարկվել է անկանխիկ գործարքների խթանմանը նպաստող ակցիան, որի շրջանակներում՝ որպես գլխավոր մրցանակ խաղարկվում էր մեկ ընտանիքի /2 մեծի + 2 երեխայի/ ուղևորություն դեպի Փարիզի Դիսնեյլենդ:

11.2. Ընկերների միջազգային տոնի կապակցությամբ Բանկի ինչպես գործող, այնպես էլ նոր հաճախորդների համար իրականացվել է քարտերի տրամադրման ակցիա:

11.3. Բանկը գործարկել է Visa Mini Fob և Visa Pay Sticker քարտերի թողարկումը և ամանորյա տոներին ընդառաջ անկանխիկ գնումներ կատարած քարտապաններին առանց սպասարկման վճարի Visa Pay Sticker կամ Visa mini FOB հավելյալ քարտերի տրամադրման ակցիան:

11.4. Մշակվել են Visa վիրտուալ հաշիվ քարտերի տրամադրման ակցիայի պայմանները:

11.5. Visa վիրտուալ հաշիվ և Visa Instant issue քարտերի Cash Back ակցիա:

11.6. Բոլոր քարտապանների կողմից Jo Malone խանութ-սրահում կատարված անկանխիկ գործարքների դիմաց Cash Back ակցիա:

11.7. Ամանորյա տոներին ընդառաջ մի շարք առևտրի և սպասարկման կետերում ըստ անկանխիկ գնումների հանրագումարի միջակայքի Cash Back ակցիա:

11.8. Առևտրի և սպասարկման կետերի կողմից ինտերնետային կայքերում վճարային քարտերը որպես վճարման միջոց ընդունելու պայմանագիր կնքող նոր իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար ակցիայի շրջանակներում սահմանվել են բանկային պրոդուկտներից օգտվելու արտոնյալ պայմաններ:

ԿՈՐՈՂՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկում գործող կառավարման համակարգի զարգացումը ենթադրում է կառավարման բաց, մրցունակ, արդյունավետ համակարգի կատարելագործում, Բանկի գործունեության համապատասխանեցում արտաքին միջավայրի մշտապես փոփոխվող պայմաններին, ֆինանսական համակարգում գնալով սրվող մրցակցությանը դիմակայում, որոշումների կայացման ճկունության աստիճանի և պատասխանատվության մակարդակի բարձրացում, կորպորատիվ կառավարման համակարգի զարգացում, որն ուղղված կլինի հորիզոնական և ուղղահայաց փոխհարաբերությունների կատարելագործմանը, Բանկում բիզնես գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանը և Բանկի գործունեության միջազգային լավագույն փորձի համապատասխանեցմանը՝ ապահովելով «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի պահանջները:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը

Բանկն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) իր բաժնետերերին եռամսյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Բանկում միջանկյալ շահութաբաժիններ կարող են վճարվել եռամսյակային պարբերությամբ, որոնց վճարման և շահութաբաժինների չափի որոշումն ընդունում է Խորհուրդը:

Որպես միջանկյալ շահութաբաժինների չափի որոշման կողմնորոշիչ հիմք կարող է ընդունվել տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տվյալ եռամսյակի միջին տոկոսադրույքների տարբերությունը: Բաժնետերերին շահութաբաժինների վճարման սահմանափակումները կապված են Բանկի ակտիվների հետագա աճի համար անհրաժեշտ կապիտալի մակարդակի պահպանմամբ, գուտ շահույթի չափի, ՀՀ ԿԲ նորմատիվների պահպանման հետ:

ՌԻՄԿԵՐ ԵՎ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Հավելված 1-ով ներկայացված ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է “Ռիսկի կառավարում” թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2019 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ